ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/93

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Մովսեսյանի (լիազորագիր տրված՝ 30.04.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.04.2020թ. թիվ 26/26-1/6271-2020 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1343-2020 գրության հիման վրա, 28.04.2020թ. թիվ 26/26-1/6271-2020 գրությամբ նախաձեռնել է «Մովսեսյան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. « Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մովսեսյան» ՍՊԸ-ն 30.04.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ 30.03.2020թ. «Մովսեսյան» ՍՊԸ-ն ստացել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-16/2 ծածկագրով ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակում պայմանագիր կնքելու առաջարկ և ընդունել այն Armeps.am համակարգի միջոցով:

Սակայն, պայմանավորված երկրում հաստատված արտակարգ դրությամբ, որով նաև սահմանափակվել է Ընկերության բնականոն գործունեությունը, «Մովսեսյան» ՍՊԸ-ն չի ներկայացել ՀՀ պաշտպանության նախարարություն՝ պայմանագիր կնքելու, այլ 03.04.2020թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով քարտուղարի պաշտոնական փոստին է ուղարկել էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը, նույն օրը փոստի միջոցով ՀՀ պաշտպանության նախարարությանն է ուղարկվել նաև հաստատված պայմանագրի, որակավորման և պայմանագրի ապահովման թղթային տարբերակները:

Ընկերությունը հայտնել է, որ 15.04.2020թ., կապնվելով գնումների համակարգողի հետ, տեղեկացվել է, որ Ընկերության ուղարկած պայմանագիրը Պատվիրատուն չի ստացել: Ընկերությունը վերջինիս հայտնել է, որ www.haypost.am կայքով կարող է ստուգել և համոզվել, որ Ընկերության ուղարկված RR279416816AM ծրարը 06.04.2020թ.-ին առաքվել է հասցեատիրոջը, սակայն եթե կա անհրաժեշտություն, Ընկերությունը պատրաստ է ևս մեկ անգամ ներկայացնել փաստաթղթերը առձեռն:

Ընկերությունը հայտնել է, որ 17.04.2020թ.-ին Ընթացակարգի համակարգողի կողմից ստացվել է փաստաթղթերն առձեռն ներկայացնելու առաջարկություն: Նույն օրը, ներկայանալով ՀՀ պաշտպանության նախարարություն, «Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչը համակարգողին է ներկայացրել կնքված և ստորագրված պայմանագրի և որակավորման ապահովումները, սակայն համակարգողը պահանջել է, որպեսզի փոխվի նշված փաստաթղթերի ամսաթվերը ներկայացնելու օրվա ամսաթվերով:

Ընկերությունը նշել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հրաժարվել է կատարել առաջարկվող փոփոխությունը, քանի որ այդ դեպքում կստացվեր, որ

«Մովսեսյան» ՍՊԸ-ն խախտել է պայմանագիր կնքելու առաջարկը ստանալուց մինչև պայմանագիր կնքելու համար նախատեսված տասնօրյա ժամկետը, և հիմքեր կստեղծվեին «Մովսեսյան» ՍՊԸ-ի հետ պայմանագիր չկնքելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Միաժամանակ «Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչը առաջարկել է ձեռագիր նշում կատարել փաստաթղթերում, դրանց առձեռն ներկայացնելու ամսաթվի վերաբերյալ, ինչին ի պատասխան՝ համակարգողը հրաժարվել է ընդունել դրանք և կնքել պայմանագիր:

Ընկերությունը հայտնել է, որ հիմք ընդունելով այն իրողությունը, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածով սահմանված կարգով, փոստի միջոցով ՀՀ պաշտպանության նախարարությանն է ներկայացրել իր կողմից վավերացված փաստաթղթերի թղթային տարբերակը, որը ստացվել է 06.04.2020թ.-ին, այսինքն՝ չխախտվելով օրենքով սահմանված 10-օրյա ժամկետը, ինչպես նաև այն, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն պայմանագիրը կնքել և ներկայացրել է նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ թվային էլեկտրոնային ստորագրմամբ, պարզ է դառնում, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն չի խախտել օրենքով սահմանված որևէ պարտավորություն, որի հետևանքով պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և միաժամանակ չկան հիմքեր Ընկերությանը պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է մերժել «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնած ընթացակարգը և ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորեցնել կնքել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-16/2 ծածկագրով պայմանագիրը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/93 ընթացակարգի շրջանակներում 06.05.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1343-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-16/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Մովսեսյան» ՍՊԸ-ն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջների համաձայն՝ անգործության ժամկետի ավարտից հետո www.armeps.am համակարգի միջոցով «Մովսեսյան» ՍՊԸ-ին ներկայացվել է կնքվելիք պայմանագրի նախագիծը և ծանուցվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ, սակայն վերջինս www.armeps.am համակարգի միջոցով ընդունել է պայմանագիր կնքելու շնորհումը, բայց սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/93 ընթացակարգի շրջանակներում 06.05.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-16/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մովսեսյան» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մովսեսյան» ՍՊԸ-ն, այնուհետև որոշվել է, հիմք ընդունելով Օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ընկերությունը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.04.2020թ. թիվ 26/26-1/6271-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1343-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Մովսեսյան» ՍՊԸ-ի 30.04.2020թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված

մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տաս տոկոսին:

Ընթացակարգի հրավերի 10-րդ կետի 10.1-րդ ենթակետի համաձայն՝ ***որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10***, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում 15 ***աշխատանքային օրվա ընթացքում***, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-16/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մովսեսյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մովսեսյան» ՍՊԸ-ն, այնուհետև որոշվել է, հիմք ընդունելով Օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Պատվիրատուն 30.03.2020թ. Ընկերությանն ուղղված ծանուցմամբ ներկայացրել է պայմանագրի նախագիծը և հայտնել, որ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում կազմել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, որոնք ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով (հավելված 4.1 և 5.1): Ստուգել պայմանագրի նախագիծը և ստորագրելու համար ներկայանալ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչություն՝ ք. Երևան Բագրևանդի 5 հասցեով: Բացի այդ, անհրաժեշտ է armeps համակարգում պատասխանել պայմանագրի շնորհմանը:

Ընկերությունը 03.04.2020թ. Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին (g.hakobyan@mil.am) ուղղված գրությամբ հայտնել է, որ կից ներկայացնում է

«Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգելու մասին գրությունը: Միաժամանակ հայտնելով, որ արտակարգ դրության պայմաններից ելնելով, հնարավոր չի եղել ներկայանալ ՊՆ և տեղում ստորագրել պայմանագիրը, ուստի այն պայմանագրի և որակավորման ապահովման հետ միասին, Ընկերության կողմից ստորագրված և կնքված 02.04.2020թ. Պատվիրատուին է ուղարկվել փոստային առաքմամբ:

Ընկերությունը 15.04.2020թ. Պատվիրատուի էլեկտրոնային փոստին ուղարկված գրությամբ հայտնել է, որ ինչպես նշվել էր նախորդ նամակում, պայմանագիրն ու տուժանքը Պատվիրատուին է ներկայացվել 02.04.2020թ. փոստային առաքմամբ, ինչը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածով սահմանված պահանջներին: Միաժամանակ հայտնելով, որ www.haypost.am կայքի միջոցով ստուգման արդյունքում երևում է, որ RR279416816AM կոդով նամակը Պատվիրատուին է հասել 06.04.2020թ.:

Ամփոփելով վերը նշվածը՝ խնդրել է Պատվիրատուին պայմանագիրն ու տուժանքը ստանալուն պես հաստատել:

Պատվիրատուն 21.04.2020թ. Ընկերությանն ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ Ընկերությանը Օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջների համաձայն՝ անգործության ժամկետի ավարտից հետո armeps.am համակարգի միջոցով ներկայացվել է պայմանագրի նախագիծը և ծանուցվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ, սակայն վերջինս armeps.am համակարգի միջոցով ընդունել է պայմանագիր կնքելու շնորհումը, բայց սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել:

Ամփոփելով Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր ստորագրելու իրավունքից: Կից ներկայացնելով նիստի արձանագրությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ընկերությունը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2020/93 ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերությանն ուղղված «Հայփոստ» ՓԲԸ-ի 29.04.2020թ. գրությունը, որտեղ նշվում է, որ

«Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ուղարկված պատվիրված նամակ RR279416816AM՝ հասցեագրված ՀՀ պաշտպանության նախարարությանը, 03.04.2020թ. ընդունվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի թիվ 0015 փոստային բաժանմունքում, ուղարկվել փոստի տեսակավորման և փոխանակման կենտրոն (ՓՏՓԿ), մշակվել է ՓՏՓԿ-ում, որտեղից ուղարկվել է հասցեն սպասարկող և հանձնումն իրականացնող Երևանի թիվ 0044 փոստային բաժանմունք: «Հայփոստ» ՓԲԸ-ի՝ Երևանի թիվ 0044 փոստային բաժանմունքում առաքանին ստացվել է 06.04.2020թ., սակայն ելնելով երկրում ստեղծված իրավիճակից՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը դեռևս առաքանիներ չի ընդունում, և պատվիրված նամակը չի հանձնվել հասցեատիրոջը ու գտնվում է փոստային բաժանմունքում՝ պահպանման ժամկետի մեջ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **<u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>*, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման հիման վրա ՀՀ պարետի 31.03.2020թ. «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» թիվ 27 որոշմամբ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում նաև տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվել են ժամանակավոր սահմանափակումներ՝ որոշումը ուժի մեջ մտնելուց (որոշումը ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 1-ին՝ ժամը 00:01-ին) մինչև 2020 թվականի ապրիլի 12-ը ժամը 23:59-ը, արձանագրում եմ, որ Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված է եղել Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում պայմանագիրը, ինչպես նաև

որակավորման և պայմանագրի ապահովումները Պատվիրատուին ներկայացնելու հնարավորությունից, ուստի նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստը, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերում է «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից դիրքորոշմամբ ներկայացված պահանջին, այն է՝ պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը կնքել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-16/2 ծածկագրով պայմանագիրը, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում ***<u>որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ</u>***:

Միաժամանակ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպիսով վերը նշված իրավակարգավորումներից բխում է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում իրավասու է միայն ընդունելու որոշում՝ մասնակցին Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ուստի նման պահանջը ենթակա չէ քննարկման սույն գործի շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.04.2020թ. թիվ 26/26-1/6271-2020 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**